— Դու Կարօն չե՞ս... — ասաց նա, առանց իմ հարցին պատասխանելու:

Նա խօսեց աղաւաղոած թուրքերէն լեզոով, բայց արտասանութիւնից իսկոյն երեւաց, որ ինքը բոշայ է, թէեւ նա չէր պատկանում բոշաների այն ցեղերին, որ ես յաճախ տեսել էի մեր կողմերում:

Երեւում էր, որ պառաւը գործով եկած էր Կարօյի մօտ եւ սխալմամբ ինձ նրա տեղ էր ընդունում, որովհետեւ աչքերի տեսութիւնը սաստիկ թուլացած էր: Ես կ'ամեցայ Կարօյին զարթեցնել. յետոյ մտածեցի. ի՞նչ վնաս, առժամանակ ձեւանալ, որպէս թէ ես Կարօն եմ: Իմ վարմունքը երեխայական անմիտ հետաքրքրութիւն էր եւ աւելի ոչինչ:

— Հա՛, իմ անունս Կարօ է, — պատասխանեցի ես: — Բայց ինչպէ՞ս են կոչում քեզ:

Բոշան զարմանալով նայեց իմ վրայ, կարծես, չէր հաւատում իր աչքերին եւ պատասխանեց պարսկերէն լեզոով.

— Կարօն ինչո՞ւ է հարցնում իր աղախնի անունը: Կարօն գիտէ, որ մարդիկ Սուսան են կոչում նրան: Կարօն բոլորը գիտէ...: — Երբ Դինբուլի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին Կարօյի երեխան եւ մենակ անցաւ Հերաթի անապատներից...: Ա՛խ, Սուսանի աչքերի լոյսը... Այն անցքից յետոյ Սուսանը վատ է տեսնում...

Այդ անկապ խօսքերը այն աստիճան մթին երեւացին ինձ, որ ես ոչինչ չհասկացայ, մանաւանդ որ բոշան խօսում էր երրորդ դէմքով: — «Կարոյի երեխա՛ն»... Միթէ՞ Կարօն երեխայ ունի. որտե՞ղ է նա: — Հերաթի անապատներից ազատել է նրան բոշան...

Այս բոլորը ինձ համար հանելուկներ էին: Միայն այսքանը հասկացայ, որ Կարօն եւ խորհրդաւոր պառաւը նախածանօթներ են եղել: Միջին Ասիայի խորքերում, Աւղանիստանում, նրանք ունեցել են յարաբերութիւններ: Բայց ի՞նչ դէպքով, ի՞նչ առիթով: — Այդ մասին չհարցրի պառաւից, զգուշանալով, բոլորովին չմերկացնել ինձ, թէ ես Կարօն չեմ:

Ես աշխատեցի ուղղել իմ անտեղի հարցմունքի սխալը, ասելով.

— Ես բոլորը գիտեմ, Սուսան, դու այն ասա՛, թէ ի՞նչ լուր ունես:

Պառաւը որպէս թէ ինքն իր հետ խօսելով, ասաց.

— Սուսանը կասէ, Սուսանը նրա համար եկաւ, որ ասէ: Սուսանը չկարողացաւ իր արտասուքը պահել, երբ տեսաւ, խեղճ աղջկան...: Նա աղաչում էր. — «Ասա՛յ Կարօյին, որ ինձ այստեղ չթողնէ. ես կը մեռնեմ ցաւից»...: — Խե՜ղճ երեխայ, որքա՜ն մաշոել էր նա...: Կը մեռնի՜, անպատճառ կը մեռնի՜